

**ՄԻԱԿԱՆԿ ԲԱՂԱԴՐԻՉՈՎ ԲԱՐԴ ԳՈՅԱԿԱՆՆԵՐԻ ՀՈԳՆԱԿԻՒ  
ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ**

ՄԱՐՈՒԹՅԱՆ Ա. Ա.

Թվակազմությունը գոյականի քերականական կարգերից մեկն է և կարևոր դեր ունի նրա ձևաբանական ու խոսքիմասային հատկանիշների բնութագրման մեջ:

Գոյականի թվակազմության մեջ առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում միավանկ վերջնաբաղադրիչով բարդ գոյականների հոգնակիակազմությունը:

Այդ կարգի գոյականները հոգնակիի կազմության ժամանակ, տարբեր հանգամանքներով պայմանավորված, հանդես են բերում որոշ յուրահատկություններ, որոնց պարզաբանումը հույժ կարևոր է լեզվական տվյալ իրողությունը ճիշտ ու ամբողջական ձևով ներկայացնելու համար:

Գոյականների թվի կարգն ունի երկանդամ հակադրություն՝ եզակի և հոգնակի, որ արտահայտվում է **անմասնիկ (զրո ձևությամբ)** և **մասնիկավոր (եր, ներ)** բառաձևերով, ինչպես՝ **սար-սար-եր, ծառ-ծառ-եր, այգի-այգի-ներ, քաղաք-քաղաք-ներ**:

Հոգնակիի կազմությունը, ինչպես երևում է բերված օրինակներից, մասնիկավոր է՝ **եր, ներ**: Իսկ թե ինչ մասնիկ է ստանում գոյականը հոգնակի դառնալիս, պայմանավորված է հիմքում եղած վանկերի քանակով: Միավանկ հիմք ունեցող գոյականներն ստանում են **-եր** մասնիկը (դաշտեր, քարեր), իսկ երկվանկ և բազմավանկ գոյականները՝ **-ներ** (ծաղիկներ, ուսանողներ, քաղաքացիներ): Սա, ինչպես հայտնի է, ժամանակակից հայերենի թվակազմության հիմնական կաղապարն է: Բիարկե, կան նաև հոգնակի կազմող այլ մասնիկներ էլ, ինչպես՝ **իկ** (մարդիկ), **այք** (կանայք, պարոնայք, տիկնայք), **ոնք** (պապոնք, տատոնք), **ունք** (Վեդունք), **ք** (գյուղացիք, քաղաքացիք), բայց սրանք հոգնակիակազմության ընդհանուր համակարգում մնում են որպես մասնակի դրսևորումներ և ընդհանրական բնույթ չունեն:

Ժամանակակից գրական հայերենի թվակարգի մեջ տարբերակում են հետևյալ հիմքերը՝ միավանկ, մեկից ավելի վանկանի (մեկուկես վանկանի, երկվանկ-բազմավանկ) հիմքեր<sup>1</sup>: Մակայն մեր նպատակը թվի քերականական կարգի ու նրա արտահայտման միջոցների քննությունը չէ: Սույն հոդվածը նվիրված է թվակարգի մի մասնավոր հարցի՝ միավանկ վերջնաբաղադրիչով գոյականների կազմության սկզբունքներին: Տվյալ դեպքում խոսքը վերաբերում է բարդ կազմություն ունեցող այն գոյականներին, որոնք միավանկ վերջնաբաղադրիչ ունենալու դեպքում, իմաստային տարբեր հանգամանքներով պայմանավորված, ստանում են **-եր** և **-ներ** հոգնակի մասնիկներ:

Այս հարցի քննությունը կարևորվում է նրանով, որ այդ կարգի շատ գոյականների հոգնակիի կազմության ժամանակ նկատվում են տատանումներ, անմիօրինակություն և առաջ են գալիս գուրգուռություններ, որոնց պետք է ճիշտ լուծումներ տրվեն: Եվ իրոք, այսօր ունենք շատ գոյականներ, որոնց հոգնակիի կազմությունը դժվարություններ է հարուցում՝ առաջացնելով

<sup>1</sup> Տե՛ս *Պետրոսյան Հ.*, Գոյականի թվի կարգը հայերենում, Ե., 1972, էջ 287:

գուգաձևություններ: Օրինակ՝ **նահանգապետե՞ր, թե՛ նահանգապետներ, ախոռապետե՞ր, թե՛ ախոռապետներ, դիվանապետե՞ր, թե՛ դիվանապետներ, դրոշմանիշե՞ր, թե՛ դրոշմանիշներ, նամականիշե՞ր, թե՛ նամականիշներ, ծխամորճե՞ր, թե՛ ծխամորճներ, ստորակետե՞ր, թե՛ ստորակետներ, վարչապետե՞ր, թե՛ վարչապետներ, քաղաքապետե՞ր, թե՛ քաղաքապետներ**: Նույն տատանումները տեսնում ենք նորակազմ բառերի հոգնակիի կազմության ժամանակ, որոնք հիմնականում վերջին տարիներում են մուտք գործել մեր բառապաշարի մեջ կամ տարածված կիրառություն ստացել, ինչպես՝ գովազդ, խաչքառ, լսափող, խոսափող և այլն:

Միավանկ վերջնաբաղադրիչով բարդ գոյականների հոգնակիության մեջ եղած անմիօրինակությունը մասամբ գալիս է բառարաններից: Այդ հարցում միօրինակություն չի նկատվում հենց բառարաններում:

Մենք համեմատեցինք հրապարակի վրա եղած մի քանի բառարաններ (Հ. Բարսեղյան, Հայերեն ուղղագրական, ուղղախոսական, տերմինաբանական բառարան, 1973, Է. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, 1976, և բոլորովին վերջերս լույս տեսած՝ Ա. Մուքիասյան, Զ. Մուքիասյան, Արդի հայերենի ուղղագրական, ձևակազմական բառարան, 2002): Համեմատությունից պարզվեց, որ միավանկ վերջնաբաղադրիչով բարդ գոյականների հոգնակիության նշումները տարբեր են իրարից: Այսպես, **գորապետ** բառի հոգնակին առաջին բառարանում ներ-ով է՝ **գորապետներ**, մյուս երկուսում՝ **եր-ով՝ գորապետեր**: **Լեռնախույզ** բառի հոգնակին առաջ ին բառարանում **ներ-ով է՝ լեռնախույզներ**, երրորդում՝ **եր-ով՝ լեռնախույզեր**, իսկ երկրորդ բառարանում որևէ նշում չկա: **Տոմսարկղ** բառի հոգնակին առաջին բառարանում տրված է ներ-ով՝ **տոմսարկղներ**, իսկ երկրորդում՝ **եր-ով՝ տոմսարկղեր**: Նույն անմիօրինակությունը տեսնում ենք **խորհրդանիշ/ներ/ - խորհրդանիշեր, ծխամորճ/ներ/ - ծխամորճեր/, գյուղապետ/ներ/ - գյուղապետ/եր/, անտառապետ/ներ/ - անտառապետ/եր/, օդանցք/ներ/ - օդանցք/եր/, լեռնանցք/ներ/ - լեռնանցք/եր/** և այլ բառերում:

Միավանկ վերջնաբաղադրիչով բարդ գոյականների հոգնակիի կազմության հարցում թեպետ ժամանակակից հայերենը հասել է որոշակի պարզության, բայց, մեր կարծիքով, դեռ կան լուծման կարոտ խնդիրներ: Հենց այդ հանգամանքն էլ անհրաժեշտ է դարձնում տվյալ հարցի քննությունը:

Այդ կարգի գոյականների կազմությունը մինչև այսօրվա վիճակին հասնելը բավական երկար ճանապարհ է անցել:

Մեր լեզվի զարգացման նախորդ շրջաններում, ընդհուպ մինչև XX դ. 30-ական թվականները, այդ կարգի գոյականների հոգնակիի կազմության հարցում հստակություն և միօրինակություն չկար: Այսպես, օրինակ՝ Շիրվանզադեի, Հ. Թումանյանի 80-90-ական թվականներին գրված հոդվածներում հանդիպում ենք միավանկ վերջնաբաղադրիչ ունեցող գոյականների հոգնակիի կազմության անմիօրինակությունների. «Համարձակորեն կարող եմ ասել, որ հայ հասարակության միայն այն դասակարգը փոքրիշատե գիտե հայերեն, որ հայ լրագիրներ է կարդում»<sup>2</sup>:

<sup>2</sup> *Շիրվանզադե Ալ.*, Երկերի լիակատար ժողովածու, հ. 9, Ե., 1955, էջ 20:

«Պետք է մարդ ամուր ջղերի տեր լինի, որ ամեն օր մեր **լրագիրների** մեջ նույնիսկ առանձին հրատարակությամբ երևան եկող վեպերը, վեպիկները, պատկերները աչքի անցկացնելով չվրդովվի հանուն այն բանի, որ կոչվում է գեղարվեստ»<sup>3</sup>: «Սկսվում է աղաղակ, իրարանցում: Մեր լեզուն աղավաղվում է, մեր գրողները հայերեն չգիտեն, մտածում են ռուսերեն և գրում են հայ տառերով, սհա այն սովորական դարձվածքները, որ գրեթե ամեն օր կկարդաք հայ **լրագիրներում**»<sup>4</sup>: «**Լրագիրներում**, եթե կարդում ենք՝ սպանեցին, կողոպտեցին, այդ Բորչավից է գրած...»<sup>5</sup>:

«Ընդհանրապես նա, ով գաղափարն է քարոզում ու **ծրագիրներ** է մշակում, ոչ գործ ունի ձեռքին, ոչ գործելու իրավունք... »<sup>6</sup>: «Չի ընդունում այն **ծրագիրները**»<sup>7</sup>:

Մի օրինակ էլ բերենք հետագա շրջանից. «Խոհեր՝ ուղղված դեպի սերունդները գալիք, **ծրագիրներ** կիսատ կամ սկսված հազիվ...»: (Չարենց):

Կարելի է օրինակներ բերել նաև այլ գրողների գործերից, սակայն բավարարվենք այսքանով: Միայն ընդգծենք, որ այդ հարցում եղած անմիօրինակությունը շարունակվում է նաև հետագա տասնամյակներում և շարունակվում է ընդհուպ մինչև մեր օրերը: Միավանկ վերջնաբաղադրիչներով գոյականների հոգնակիի կազմության անմիօրինակության այս երևույթը ժամանակին նկատել է անվանի լեզվաբան Հր. Աճառյանը՝ գրելով. «Բարդ բառերը, ըստ սովորական կանոնի, հոգնակիում ստանում են ներ մասնիկը. օրինակ՝ երկաթուղի-երկաթուղիներ, հացավաճառներ և այլն: Իսկ երբ բարդ բառի վերջին եզրը միավանկ է, սկսվում են տատանումներ: Թե արևելյան և թե արևմտյան գրականի մեջ սրանց հոգնակին զանազան ձևով է լինում. օրինակ՝ **լրագիր**, **լրագրեր**, **լրագիրներ**, **լրագրներ**: Դրվում է **-եր** մասնիկը՝ նկատի ունենալով, որ վերջին եզրը միավանկ է, այսինքն՝ առնելով բառը առանձին (գիր-գրեր) և մտածելով, որ չի կարելի ասել գրներ, գիրներ: Դրվում է **-ներ** մասնիկը՝ առնելով բառը իբրև մեկ ամբողջություն և մտածելով, որ բազմավանկը ըստ օրենքի պիտի ստանա **-ներ** մասնիկը: Չանազան քննիչներ տվել են սրանց մասին զանազան կանոններ, բայց ինձ թվում է, թե հարցը երկդիմի է և հետևաբար անլուծելի է: Ըստ իս, տրամաբանությունը պիտի պահանջեր համարել բազմավանկ ու դնել **-ներ**, բայց կան բառեր, որոնց **-եր-ով** հոգնակին այնքան սովորական է դարձել, որ անկարելի է անտես անել և դնել **-ներ**. այսպես. տաճկահայեր, բայց ոչ երբեք տաճկահայներ:

Նույնիսկ միևնույն բառը այս ինչ բարդի մեջ **-ներ** կարող է ստանալ, օրինակ՝ պահակակետեր, բայց ստորակետներ»<sup>8</sup>:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 55:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 256:

<sup>5</sup> *Թումանյան Հովհ.*, *Երկերի լիակատար ժողովածու.*, հ. 6, Ե., 1994, էջ 27:

<sup>6</sup> Նույն տեղում, էջ 50:

<sup>7</sup> Նույն տեղում:

<sup>8</sup> *Աճառյան Հր.*, *Լիակատար քերականություն հայոց լեզվի*, հ. 3, Ե., 1957, էջ 818-819:

Այս մեջբերումից կարող ենք եզրակացնել, որ, ըստ Աճառյանի կարծիքի, վերջնաբաղադրիչ գոյականների հոգնակիի կազմությունը որոշակի օրինաչափությունների չի ենթարկվում: Դրանով լեզվաբանը, իհարկե, արձանագրել է ժամանակին լեզվական այս իրողության անկայուն վիճակը: Իսկ որ մեր լեզվի անցած շրջաններում այդ հարցը կանոնավորված չէր, անվիճելի է:

Մեզ հետաքրքրող հարցի մասին Ս. Աբեղյանը գրել է. «Բոլոր բազմավանկ բառերը, երբ երկրորդ բաղադրիչ մասը միավանկ է և պահում է իր նշանակությունը, ընդունում են **-եր. դասագրքեր, վառելափայտեր, անձրևաջրեր, դասակարգեր**: Բայց երբ երկրորդ մասը բայարմատ է կամ նոր նշանակությամբ մի բառ է կազմում, այս դեպքում ավելանում է **-ներ. մարդասերներ, մատենագիրներ, խոտակերներ, մեծասիրտներ, ձեռագիրներ**»<sup>9</sup>: Տարօրինակ է, որ վերջին բառը դրված է այդ բառերի շարքում:

Եթե Աճառյանը միավանկ վերջնաբաղադրիչներով բարդ գոյականների հոգնակիի կազմությունը համարում էր «երկդիմի և անլուծելի» հարց, ապա Աբեղյանն այդ կարգի գոյականների հոգնակիի կազմության մեջ նկատում է ինչ-որ օրինաչափություններ և կանոնարկում է ըստ իմաստային հատկանիշի: Նկատենք, որ Աբեղյանի դիտարկումը ճիշտ է և ընդունելի: Պատահական չէ, որ հետագա շրջանի լեզվաբանները (Գ. Սևակ, Էդ. Աղայան) քննարկվող հարցում ըստ էության հենվում են Աբեղյանի տեսակետի վրա: Այսպես, Գ. Սևակը, անդրադառնալով քննարկվող հարցին, գրում է. «Բազմավանկ բաղադրված բառերից նրանք, որոնց վերջին բաղադրիչ արմատը միավանկ է, կարող են ստանալ թե **-եր**, թե **-ներ**: Երբ վերջին (միավանկ) բաղադրիչը իր հիմնական իմաստը պահպանում է նաև բաղադրության մեջ, այս դեպքում ամբողջ բաղադրյալն ստանում է վերջին բաղադրիչի հոգնակիի կազմությունը, այսինքն՝ **-եր**. օրինակ՝ տուն-տներ, վերնատուն-վերնատներ, գիրք-գրքեր, դասագիրք-դասագրքեր, պատ-պատեր, միջնապատ-միջնապատեր: Իսկ երբ վերջին միավանկ բաղադրիչն իր հիմնական իմաստը չի պահպանում, այլ միայն իր նյութական իմաստն է ավելացնում ամբողջ բաղադրյալին, որը կարող է ստանալ նաև այլ հիմնական իմաստ /<sup>0</sup>/, այդպիսի դեպքում բաղադրյալ բառը դիտվում է իբրև բազմավանկ ինքնուրույն բառ և ստանում է բազմավանկ բառերի **-ներ** վերջավորությունը. օրինակ՝ գիր-գրեր, հեռագիր-հեռագրեր, բայց պատմագիր-պատմագիրներ, տուն-տներ, վերնատուն-վերնատներ, բայց մեծատուն-մեծատուններ, հատ-հատեր, մարգարտահատ-մարգարտահատեր, բայց քարհատ-քարհատներ»<sup>10</sup>:

Աղայանը նույնպես հենվում է Աբեղյանի տեսակետի վրա՝ ընդգծելով, որ **-եր** ստանում են միավանկ բառերը, ինչպես նաև այն բարդ բառերը, որոնց վերջին եզրի միավանկ բաղադրիչը գոյականի իմաստ ունի բարդության մեջ (օր. **արտավայր-արտավայրեր**), իսկ բազմավանկ բառերի, ինչպես նաև այն բարդ բառերի, որոնց վերջին եզրի միավանկ բաղադրիչը բայարմատ է կամ բայիմաստ ստացած գոյականներ՝ **-ներ** (օր. **վիպագիր-վիպագրներ**)<sup>11</sup>:

<sup>9</sup> *Աբեղյան Ս.*, Հայոց լեզվի տեսություն, Ե., 1965, էջ 337:

<sup>10</sup> *Սևակ Գ.*, Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, Ե., 1955, էջ 277:

<sup>11</sup> *Աղայան Է.*, Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, Ե., 1967, էջ 250:

Քննարկվող հարցին առավել հանգամանորեն անդրադարձել է լեզվաբան Հ.Պետրոսյանը: «Երկվանկ-բազմավանկ հիմքերի մեջ, -գրում է նա,- առավել հատկանշական են այն բաղադրյալ տեսակները, որոնք միավանկ արմատ (կամ բառ) վերջնաբաղադրիչով պայմանավորված՝ կարող են մեկ -եր, մեկ՝ -ներ հոգնակերտ ընդունել»<sup>12</sup>: Գոյականների թվի կարգին նվիրված իր մեծարժեք աշխատության մեջ հեղինակը նյութի մանրագնին քննությամբ ներկայացնում է բաղադրյալ կազմություն ունեցող գոյականների երկու տեսակները՝ փաստական հարուստ նյութով (գոյական վերջնաբաղադրիչով բերվում է մոտ 90 բառ, իսկ բայարմատ բաղադրիչով՝ 80 բառ): Այդ կարգի բառերի հոգնակիակազմության սկզբունքը նույնն է. «Երկվանկ-բազմավանկ այն բարդ հիմքերը, որոնք ունեն միավանկ բառ-վերջնաբաղադրիչ՝ **վերջինիս բառիմաստի արժեքի պահպանումով, ստանում են -եր հոգնակերտը**»<sup>13</sup>:

Միավանկ վերջնաբաղադրիչ ունեցող գոյականները կարող են ստանալ նաև -ներ հոգնակերտը: Այս կարգի բարդությունների վերաբերյալ Հ.Պետրոսյանը գրում է. «Եթե դոմինանտող լեքսիկական նշանակությունը ոչ թե վերջնաբաղադրիչին է, այլ ամբողջ բաղադրությանը, ուրեմն այստեղ հիմքի ձևաբանական կազմի գործոնները երկրորդական պլանի վրա են մղվում, վճռական նշանակություն է ստանում պարզ երկվանկ-բազմավանկ բառերի (հիմքերի) հոգնակիակազմության կաղապարը՝ հիմք -ներ գուգորդումը. արձակագիր-արձակագիրներ»<sup>14</sup>:

Հեղինակի դիտարկումները հիմնականում ճիշտ են և որոշակի հստակություն են մտցնում քննարկվող հարցում:

Նկատենք, որ միավանկ վերջնաբաղադրիչով բարդությունների մեջ կան այնպիսիք, որոնք իրենց խոսքիմաստային արժեքով գոյական չեն, այլ ածական և հանդես են գալիս փոխանվանական կիրառությամբ (փոխանուն ածական): Օրինակ՝ ազատամիտ, ազգամոլ, ազգասեր, աթոռամոլ, աշխատասեր, գավառախոս, շահասեր, որկրամոլ, չարագործ, չարախոս, ջանասեր, պչրասեր, շատակեր, և այլն:

Կան նաև այնպիսի բարդություններ, որոնք հանդես են բերում խոսքիմասային տարարժեքություն՝ համատեղելով ածականի և գոյականի իմաստներ. ինչպես՝ խավարամիտ, թատերասեր, խավարամոլ, դրամաշորթ, ժողովրդավար, պնակալեզ, սահմանախախտ, սնոտիապաշտ և այլն: Հասկանալի է, որ երբ սրանք հանդես են գալիս փոխանվանական կիրառությամբ կամ որպես գոյական հոգնակի թիվ են ստանում, ենթարկվում են այն նույն օրենքին, ինչ որ միավանկ վերջնաբաղադրիչ բայարմատ ունեցող գոյականները, այսինքն՝ ստանում են -ներ: Այսպես, շատակեր նշանակում է շատ ուտող, պչրասեր-պչրանք սիրող, սահմանախախտ-սահմանը խախտող: Հասկանալի է, որ դրանց հոգնակին էլ կազմու է -ներ-ով՝ շատակերներ, պչրասերներ, սահմանախախտներ:

<sup>12</sup> Պետրոսյան Հ., նշվ. աշխ., էջ 296:

<sup>13</sup> Նույն տեղում, էջ 299:

<sup>14</sup> Նույն տեղում, էջ 304:

Այսպիսով, ընդունված և գոյություն ունեցող կանոնի համաձայն, որ տեղ է գտել նաև դպրոցական դասագրքում<sup>15</sup>, այն գոյականները, որոնց վերջին բաղադրիչը միավանկ է, կարող են ստանալ **-եր** կամ **-ներ** հոգնակերտ մասնիկները:

Այսօր արդեն, որպես որոշակի օրինաչափություն, կարող ենք ասել, որ վերջնական բաղադրիչով բարդ գոյականներն ստանում են **-եր** մասնիկը, եթե այդ բաղադրիչի բառային իմաստը պահպանվում է բաղադրության մեջ, իսկ եթե վերջնական բաղադրիչը բայարմատ է և նոր իմաստ է տալիս բաղադրությանը (մի բան ունեցողի կամ անողի), ստանում է **-ներ**: Այսպես, օրինակ՝ ծաղկաթերթ-ծաղկաթերթեր, սեպագիր-սեպագրեր, սառցադաշտ-սառցադաշտեր, գորամաս-գորամասեր, ձողափայտ-ձողափայտեր, հեռագրասյուն-հեռագրասյուններ, ոտնաձայն-ոտնաձայներ, վառելանյութ-վառելանյութեր, նախագիծ-նախագծեր, անձրևաջուր-անձրևաջրեր, խաչքար-խաչքարեր: Բայց հայագետ-հայագետներ, մանկավարժ-մանկավարժներ, մանկաբույժ-մանկաբույժներ, գործազուրկ-գործազուրկներ, բեռնակիր-բեռնակիրներ, ձրիակեր-ձրիակերներ, երկնաքեր-երկնաքերներ, սևամորթ-սևամորթներ, նետաձիգ-նետաձիգներ, անասնապահ-անասնապահներ, սերմնացան-սերմնացաններ, քարտաշ-քարտաշներ, մարգասեր-մարգասերներ, ընդդիմախոս-ընդդիմախոսներ, չափահաս-չափահասներ, թատերագետ-թատերագետներ, ժամապահ-ժամապահներ և այլն:

Հոգնակիի կազմության այս երևույթը, որ ինչպես նշվեց, մեր լեզվի անցած շրջաններում բավական շատ տատանումների և երկձևությունների տեղիք էր տալիս, այսօր արդեն դարձել է որոշակի օրինաչափություն ժամանակակից հայերենի համար: Նկատենք, որ բացի նշված բարդություններից, ժամանակակից հայերենում կան նաև մի քանի ածանցավոր կազմություններ, որոնք դարձյալ հոգնակին կազմելիս ստանում են **-ներ** հոգնակի մասնիկը, ինչպես՝ այգեգործ-այգեգործներ, գինեգործ-գինեգործներ (այս բառերում գործ-ը կորցրել է իր գոյականական իմաստը և վերածվել է ածանցի. այգեգործ նշանակում է այգու գործ անող, գինեգործ՝ գինու գործ անող): Կամ անտուն-անտուններ (նշանակում է տուն չունեցող): Հասկանալի է, որ այդ կազմություններում վերջին միավանկ բաղադրիչի իմաստը չի պահպանվում: Այդպես էլ ունենք՝ բայ-բայեր, բայց՝ դերբայ-դերբայներ, մակբայ-մակբայներ, ձայն-ձայներ, բայց՝ բաղաձայն-բաղաձայններ:

Սակայն պետք է ասել, որ միավանկ վերջնաբաղադրիչով բարդ գոյականների հոգնակիակազմության վերը նշված կանոնը, որը օրինաչափություն է դարձել, հարցն ամբողջովին չի լուծում, քանի որ այսօր մեր լեզվում կան միավանկ վերջնաբաղադրիչով շատ գոյականներ, որոնք չեն ենթարկվում վերը նշված օրինաչափությանը, և դժվար է պնդել, թե դրանց հոգնակին պետք է կազմել **-եր**-ով: Տվյալ դեպքում խոսքը վերաբերում է այն բարդ գոյականներին, որոնց վերջնաբաղադրիչը գոյական է և ոչ բայարմատ:

---

<sup>15</sup> Տե՛ս **Աղայան Է., Բարսեղյան Հ.**, Հայոց լեզու, Դասագիրք 5-7-րդ դասարանների համար:

Լեզվական փաստերը ցույց են տալիս, որ անվերապահորեն չի կարելի պնդել, որ եթե բարդ բառի վերջնաբաղադրիչը գոյական է և ոչ բայարմատ, պետք է ստանա -եր հոգնակերտը: Այսպես, օրինակ՝ ինչպե՞ս կազմել հետևյալ գոյականների հոգնակին՝ **-եր-ով**, թե՞ **-ներ-ով**՝ **ծխախոտ**, **խորհրդանիշ**, **տեսակետ**, **ժամկետ**, **ընձուղտ**, **ախտանիշ**, **հրազեն**, **վերջալույս**, **վարչապետ**, **նահանգապետ**, **դրոշմանիշ**, **նամականիշ**, **օդանցք**, **լեռնանցք**, **չափանիշ**, **ցեղապետ**, **հայրապետ**, **պահակապետ**, **ծխամորձ**, **կրոնապետ**, **միապետ**, **ներքնաձիգ**, **գովազդ** և այլն:

Բերված և նման կարգի օրինակների շատ բառեր հոգնակիակազմության ժամանակ հանդես են բերում տատանումներ՝ առաջացնելով գուգաձևություններ, անմիօրինակություն և առաջ բերում դժվարություններ լեզվագործածության մեջ: Ասվածից հետևում է, որ վերջնաբաղադրիչ միավանկ գոյականների կազմության կանոնը թերի է և ճշտգրտման կարիք ունի: Այնպես որ մենք չենք կարող անվերապահորեն պնդել, որ եթե միավանկ վերջնաբաղադրիչը գոյական է, պետք է ստանա **-եր** հոգնակերտը: Բանն այն է, որ այդ կարգի գոյականների հոգնակիության ժամանակ չպետք է բավարարվել միայն այդ վերջնաբաղադրիչի ձևաբանական հատկանիշով, այսինքն՝ նրա գոյական լինելու հանգամանքով, այլ հաշվի առնել նրա իմաստային հատկանիշը, այսինքն, թե այն **իմաստային** ինչ արժեքով է մտնում բաղադրության մեջ:

Տատանումների ու գուգաձևությունների պատճառն այն է, որ ճիշտ չի ընկալվում վերջնաբաղադրիչ գոյականի բառային նշանակությունը, մինչդեռ հենց դրանով է պայմանավորված միավանկ վերջնաբաղադրիչ գոյականների հոգնակիի կազմության սկզբունքը: Տվյալ դեպքում որևէ դեր չի խաղում այն հանգամանքը, որ վերջնաբաղադրիչ միավանկ գոյականը ինքնուրույն գործածություն ունի<sup>16</sup>, թե ոչ, այլ այն, թե այն բաղադրության մեջ իմաստային ինչ արժեքով է մտնում: Նշված աշխատության մեջ Հ.Պետրոսյանը ճիշտ է նկատում, որ երբ միավանկ բաղադրիչը բարդության մեջ է մտնում «բառիմաստի արժեքի պահպանումով», ստանում է **-եր** (ածխահանք-ածխահանքեր, գորամաս-գորամասեր), իսկ երբ վերջնաբաղադրիչը, մտնելով բաղադրության մեջ, հեռանում իր հիմնական իմաստից, գերիշխում է բարդության բառիմաստը, ապա հիմքը գուգորդվում է **-ներ** հոգնակերտի հետ<sup>16</sup>:

Բայց այդ դեպքում հարգելի հեղինակը ինչու է **ծխամորձ**, **նամականիշ**, **դրոշմանիշ** բառերը դրել **-եր-ով** կազմված բառերի շարքում: Մի թե **մորձ**, **նիշ** բաղադրիչները այդ կազմություններում հանդես են եկել իրենց բառային արժեքի պահպանումով: Կարծում ենք՝ ոչ: Սրանից բխում է մեր առաջին եզրակացությունը. միավանկ վերջնաբաղադրիչով բարդ գոյականների հոգնակիի կազմության մեջ էական դեր չի խաղում գոյականական խոսքիմասային արժեքի պահպանումը, կարևորվում է բառային իմաստը:

<sup>16</sup> Պետրոսյան Հ., նշվ. աշխ., էջ 309:

Եթե միավանկ վերջնաբաղադրիչ գոյականը բարդության մեջ չի պահպանում իր բառային իմաստը, պետք է ստանա **-ներ** հոգնակերտ մասնիկը և ոչ թե **-եր**: Հետևաբար պետք է լինի **ծխամորճներ, դրոշմանիշներ, նամականիշներ, խորհրդանիշներ**: Այս կարգի բառերի հոգնակին կազմելիս, կրկնում ենք, նշանակություն չունի այն հանգամանքը, որ վերջնաբաղադրիչը գոյական է: Այս դեպքում պետք է նկատի ունենալ **վերջնաբաղադրիչ գոյականի բառիմաստի մթագնման հանգամանքը**: Այսպես, օրինակ՝ անառարկելի է, որ **ոտնաձայն, հեռագրասյուն, արոտավայր, ածխահանք, աշխատավարձ, սեփականատեր, ծաղկաթերթ, վանահայր**, բառերում վերջին բաղադրիչները հանդես են եկել իրենց բառային իմաստի պահպանումով, քանի որ այդ բարդությունների ամբողջական իմաստի մեջ իշխողը վերջնաբաղադրիչի նշանակությունն է (**ձայնը, սյունը, վայրը, հանքը, շերտը, վարձը, տերը, թերթը, հայրը**): Դրանք էլ իրենց հոգնակիության կաղապարն են պարտադրել ամբողջ բարդությանը: Բայց այդ նույնը չենք կարող ասել **ծխամորճ, նամականիշ, դրոշմանիշ, խորհրդանիշ, ծխախոտ, լեռնանցք, տեսակետ, միջանցք, ջրանցք, գովազդ, ժամկետ, խաչքառ** բառերի մասին:

Այսօրվա լեզվամտածողությամբ մենք **ծխամորճ** բառի մեջ չունենք վերջնաբաղադրիչ գոյականի անկախ իմաստի ընկալում և գիտակցում (**մորճ** նշանակում է դալար ոստ, ճյուղ), քանի որ նրա իմաստը բարդության մեջ մթագնած է, և կարող ենք վերականգնել միայն ստուգաբանական վերլուծությամբ: Նույնը վերաբերում է **խորհրդանիշ, դրոշմանիշ, նամականիշ, լեռնանցք, միջանցք, ջրանցք, ժամկետ** և այդ կարգի այլ բառերի: Մի թե խորհրդանիշ կամ դրոշմանիշ ասելով այսօր որևէ մեկը հասկանում է խորհրդի նիշ կամ դրոշմի նիշ: **Լեռնանցք** ասելով էլ չենք հասկանում լեռան անցք:

Հետևությունը պարզ է. այդ բառերի վերջին միավանկ բաղադրիչը կորցրել է իր բառային նշանակությունը, քանի որ նրա իմաստը մթագնել է, և այդ ամբողջ բարդությունը գիտակցվում է որպես նոր իմաստով բարդ բառ, և այդ պատճառով էլ նրանց հոգնակին կազմելիս նկատի չենք ունենում այդ բարդությունները կազմող բաղադրիչների **ստուգաբանական իմաստը**: Նման դեպքերում ելնում ենք ամբողջ բարդությամբ պայմանավորված բառային նոր իմաստից և հոգնակին էլ կազմում ենք բազմավանկ բառերի կաղապարով, այսինքն՝ **-ներ**-ով. **դրոշմանիշներ, խորհրդանիշներ, լեռնանցքներ, միջանցքներ, ժամկետներ, ծխամորճներ, ծխախոտներ**:

Վերջնաբաղադրիչի իմաստի մթագնում ենք տեսնում նաև **ցուցանիշ, ախտանիշ և չափանիշ** բառերում, ուստի դրանց հոգնակին էլ կլինի՝ **ցուցանիշներ, ախտանիշներ, չափանիշներ**:

Որ վերջնաբաղադրիչ միավանկ գոյականի իմաստային հատկանիշը որոշակի, ավելին, վճռորոշ դեր է խաղում բարդության հոգնակիակազմության մեջ, երևում է նույնարմատ բառազույգերի համեմատությունից: Որպես բնորոշ օրինակ, վերցնենք **ծխախոտ և մոլախոտ** բառերը: Առաջին բառում վերջնաբաղադրիչ իմաստը մթագնած է, որովհետև այսօրվա լեզվամտածողությամբ **ծխախոտ** չի նշանակում **ծխելու խոտ** (թեպետ ստուգաբանական իմաստը դա է): Այն իր իմաստով նոր բառ է, և նրա հոգնակին



Էլ պիտի կազմվի բազմավանկ բառերի կադապարով՝ **ծխախոտներ**: Բայց դրա կողքին ունենք մոլախոտ բառը, որը կազմված է մոլ (ծառերի բնի մոտ աճած երկրորդական ճյուղ) և խոտ բաղադրիչներից: Դժվար չէ նկատել, որ այս կազմության մեջ երկրորդ արմատի իմաստը մթազնած չէ, ուստի նրա հոգնակին կկազմվի **-եր-ով՝ մոլախոտներ**: Վերցնենք մեկ այլ օրինակ՝ **դիտակետ, պահակակետ**: Սրանց հոգնակին, պարզ է, որ կկազմվի **-եր-ով՝ դիտակետեր, պահակակետեր**: Իսկ **ժամկետ, տեսակետ, ստորակետ** նույնարմատ վերջնաբաղադրիչներով բառերի հոգնակին նույն պատճառաբանությամբ կկազմվի **-ներ-ով՝ ժամկետներ, տեսակետներ, ստորակետներ**:

Նույնը վերաբերում է **քթանցք, դիտանցք, ջրանցք, լեռնանցք, բառագույզերին: Քթանցքեր, դիտանցքեր, բայց ջրանցքներ, լեռնանցքներ**:

Կարծում ենք՝ նույն մոտեցումը պետք է ունենալ նաև **գովազդ** (նաև **լուսագովազդ, գունագովազդ**), **մահազդ, խաչքառ** բառերի նկատմամբ: Դրանց հոգնակին կազմելիս դարձյալ չենք կարող ելնել վերջնաբաղադրիչների գոյականական խոսքիմասային արժեքից, այլ բաղադրության ամբողջական իմաստից: Դրանց հոգնակին, մեր կարծիքով, ճիշտ կլինի կազմել **-ներ-ով՝ գովազդներ, գունագովազդներ, մահազդներ, խաչքառներ**:

Մամուլում արդեն հանդիպում ենք **գովազդ** բառի հոգնակիի կազմությանը՝ **-ներ-ով**. «Ճշմարտությունն այն է, որ վերջին տարիներին էթերը թրատող **գովազդների** մեջ քիչ չեն վերոհիշյալ պայմաններին համապատասխանող **գովազդները...** «Շուկայական հարաբերություններին հասնելու, անկախություն ստանալու «հոգեզմայլ» նորարարություններից մեկն էլ **գովազդները** եղան»<sup>17</sup>: «Չկա **գովազդների** հրավառություն»<sup>18</sup> «Մտրիհրդային Հայաստան» թերթում տպագրվեց Խանջյանի փոքրիկ մի նկար և Անդրերկրկումի ու Հայաստանի Կոմկուսի կենտկոմի **մահազդները**, որոնք ասես քաղաքական և դատական մեղադրանքներ էին»<sup>19</sup>:

Քննարկվող հարցում որոշ դժվարություն կարող է հարուցել վերջնաբաղադրիչ գոյականի իմաստի մթազնման աստիճանը, որը և կարող է տատանումների և գուգաձևությունների պատճառ դառնալ լեզվի զարգացման տվյալ շրջանում: Այսպես, **պետ** միավանկ բառի հոգնակին կազմվում է **-եր-ով՝ պետեր**: Բայց այդ նույն վերջնաբաղադրիչով ունենք բազմաթիվ բարդություններ՝ **ատենապետներ, սենեկապետներ, հայրապետներ, մայրապետներ, միապետներ, վարչապետներ, դիվանապետներ, կրոնապետներ, քաղաքապետներ, նահանգապետներ, սպարապետներ** և այլն, որոնց մեջ վերջնաբաղադրիչի իմաստը կորել է և այն ավելի շուտ ածանցական արժեքով է գործածվում: Ինչպե՞ս կազմել սրանց հոգնակին, **-եր-ով**, թե՛ **-ներ-ով**: Օրինակ՝ **բանտապետ, ավազակապետ, պահակապետ, ցեղապետ, քարավանապետ, զորապետ** բառերում թեպետ պետի ղեկավար դերի իմաստը ինչ-որ չափով պահպանված է, բայց ինչպես արդեն ասվեց, այդ վերջնաբաղադրիչը ավելի շուտ ածանցական արժեք ունի, ուստի կարծում ենք,

<sup>17</sup> Գրական թերթ, 2002, փետրվար:

<sup>18</sup> *Կապուտիկյան Մ.*, Իմ կածանը աշխարհի ճանապարհներին, Ե., 2002, էջ 11:

<sup>19</sup> *Ալազան Վ.*, Տառապանքի ուղիներով, Ե., 1990, էջ 6:

որ սրանց հոգնակի ճիշտ ձևերը **-ներ-ով** կազմություններն են՝ **անտառապետներ, դահճապետներ, գորապետներ, հագարապետներ, քանտապետներ, սեղանապետներ, գյուղապետներ** և այլն: Լրիվ իմաստափոխություն տեսնում ենք **սպարապետ, գնդապետ, մայրապետ, սենեկապետ, բռնապետ** բառերում: Իսկ **գնդապետ** բառը այսօր ավելի շուտ նշանակում է զինվորական աստիճան, քան գնդի պետ:

Թեպետ քիչ, բայց հանդիպում ենք այնպիսի բարդությունների, որոնց միավանկ վերջնաբաղադրիչը ոչ թե գոյական է, այլ ածական, բայց ամբողջ բարդությունը ունենում է գոյականի խոսքիմասային արժեք, ուստի կարող է ստանալ հոգնակի թիվ: Օրինակ՝ **աշխատակից, զրուցակից, սեղանակից, դաշնակից, գործակից, հանցակից, ազգակից** և այլն: Սրանց հոգնակին նույնպես կազմվում է **-ներ-ով աշխատակիցներ, դաշնակիցներ, սեղանակիցներ** և այլն:

Քննարկվող հարցի ամբողջացման համար նկատենք, որ տատանումներ ու երկձևություններ են նկատվում նաև վերջնագաղտնավանկ հիմք ունեցող որոշ բառերում: Խոսքը վերաբերում է այն բառերին, որոնց վանկերից մեկը ոչ լիահունչ (ը) ձայնավոր է: Ըստ գաղտնավանկի դիրքի, տարբերում ենք երկու ենթատեսակ՝ ա) երբ ոչ լիահունչ վանկը սկզբում է, բ) երբ այդ նույն գաղտնավանկը վերջում է: Սկզբնագաղտնավանկ հիմք ունեցող բառերը հոգնակիության ժամանակ ստանում են **-ներ**, իսկ վերջնագաղտնավանկ ունեցողները՝ **-եր**: Օրինակ՝ **տնակներ, դպիրներ, վկաներ, բնագղներ, բնիկներ, տնկիներ, բլուրներ, դպրոցներ, զրույցներ, լճակներ, մկրատներ, մկաններ, կայսրեր, դուստրեր, եզրեր, աստղեր, արկղեր, ժանրեր, վագրեր, ազդրեր, վաղրեր** և այլն:

Հենց այս վերջնագաղտնավանկ բաղադրիչներ ունեցող գոյականները, երբ հանդես են գալիս բարդությունների մեջ, առաջ են բերում տատանումներ ու երկձևություններ: Կարծում ենք՝ բաղադրությունների մեջ պարտադիր չէ, որ այս կարգի գոյականները պահպանեն հոգնակիակազմության նույն կաղապարը: Վերջնագաղտնավանկ բաղադրիչներով կազմված գոյականները հոգնակի դարձնելիս առաջարկում ենք առաջնորդվել վերը բացատրված սկզբունքով, այսինքն՝ հաշվի առնել վերջնաբաղադրիչի իմաստափոխության հանգամանքը: Օրինակ՝ ունենք **դրամարկղ, տոմսարկղ** բարդությունները, որոնց մեջ վերջին բաղադրիչը հանդես չի գալիս իր բառային արժեքով, որովհետև **դրամարկղ** ասելով չենք հասկանում դրամի արկղ և ոչ էլ **տոմսարկղ** նշանակում է տոմսի արկղ: Հետևաբար, ճիշտ կլինի, որ դրանց հոգնակին կազմվի ոչ թե **-եր-ով**, այլ **-ներ-ով**, այսինքն՝ հաշվի առնվի բաղադրիչների ամբողջական իմաստը (**դրամարկղներ, տոմսարկղներ**): Իսկ այն դեպքում, երբ գաղտնավանկ բաղադրիչը իր իմաստը պահպանում է, կստանա **-եր՝ այտոսկրեր, կրծոսկրեր, աղբարկղեր**:

Ասվածից հետևում է, որ միավանկ վերջնաբաղադրիչ ունեցող գոյականների հոգնակիի կազմության մեջ եղած տատանումները վերացնելու համար պետք է ելնել այդ բարդությունները կազմող բաղադրիչների իմաստային հատկանիշներից և ճիշտ գնահատել նրանց ձևայինների իմաստային հարաբերությունները:

**ОБРАЗОВАНИЕ МНОЖЕСТВЕННОГО ЧИСЛА СЛОЖНЫХ  
СУЩЕСТВИТЕЛЬНЫХ, ИМЕЮЩИХ В КОНЦЕ ОДНОСЛОЖНЫЙ  
КОМПОНЕНТ, В СОВРЕМЕННОМ АРМЯНСКОМ ЯЗЫКЕ**

МАРУТЯН А. А.

**Резюме**

В статье говорится о принципах образования множественного числа сложных существительных, имеющих в конце односложный компонент.

Интерес к этому вопросу объясняется тем, что при образовании таких существительных замечаются колебания и нет единообразия (գորապետեր-գորապետներ, խորհրդանիշեր-խորհրդանիշներ, դրոշմանիշեր-դրոշմանիշներ):

По общепринятым правилам, сложные существительные с односложным компонентом в конце множественное число образуют с помощью частицы «с», когда в конце односложное существительное сохраняет свое лексическое значение (նախագիծ-նախագծեր, ծրագիր-ծրագրեր, դաշտավայր-դաշտավայրեր):

А если последний компонент – корень глагола и придает слову новое значение, то множественное число образуется с частицей «ներ» (հայազետ-հայազետներ, վիրաբույժ-վիրաբույժներ, բեռնակիր-բեռնակիրներ):

Но в современном армянском языке есть много сложных существительных, которые не подчиняются этому правилу. Это объясняется тем, что последний компонент утерял свое лексическое значение, и поэтому при образовании множественного числа такие слова получают частицу «ներ» (ծխամորճ-ծխամորճներ, նամականիշ-նամականիշներ, տեսակետ-տեսակետներ, ջրանցք-ջրանցքներ):